ցայայտ կերպով գրուած կը լինէր մեր առջև որոշապէս հայոց լեզուի այն գեղեցիկ կամ տգեղ պատկերը, որ կամենում են նորոգել կամ աւելի ճիշտն ասած՝ կորկատել մեր նկարիչ-լեզուագէտները։

Այլապէս ինչ միտք ունին գրեթէ տեսականօրէն կամ վերացական կերպով, առաձգական խօսքերով ու «փռազներով» առանց լեզուագիտական մի որոշ սիստէմի և կամ սահմանի, կամայօրէն յետ ու առաջ բերած և մեզ հրամցած հարցերն ու առաջարկները, կարծիքներն ու ենթադրութիւնները, մանաւանդ որ դեռ մեզ էլ են առաջարկում, որ մենք էլ մեր կողմից «նոր հարցեր արծարծենք և պատասխանենք». մի բան, որ վերևում ասածիս պէս կարելի է անվերջ շարունակել՝ նորանոր սխօլաստիքական բծախնդրութիւններ հնարելով։

Եւ վերջապէս՝ չէ՞ որ շատերին և գուցէ մանաւանդ նրանց, որոնք առանց որևէ յետին մտքերի միշտ իսկական նախանձախնդիր են եղած և են ներկայումս հայ գրական լեզուի մաքրութեան ու հարազատութեան, չէ՞ որ շատերին, ասում եմ, *վիճակուած* չի լինիլ ներկայ լինել Էջմիածնի այդ հայ «լեզուավիճական կաճառում», ուր առաջարկած և դեռ շատ նոր առաջարկուելիք (ըստ հայոցս սովորութեան) անվերջ ու անծայր «խորհրդակցութիւններով» փոխանակ որևէ օգտակար ու ցանկալի արդիւնք ստանալու, մի նոր Բաբելոնեան խառնակութիւն ևս պիտի առաջ գայ՝ առանց այդ էլ խառնակ, օտարացած ու այլախօս մեր «գրական» լեզուի համար....

Խե՜ղճ հայոց լեզու. «Հայոց հարցը» ասում են վերջացաւ, հիմա երևի քո հերթն է։ Անշուշտ քեզ էլ մի ինչ որ «կենդրոնական լեզուավիճական ժողով է սպասում. Յուսանք, որ դու էլ մեր անմահ քանաստեղծի զօրաւոր խօսքերով կասես, կը ձայնես այդ «ժողովին»՝

«Ամեն մարդ չի կանա խըմի իմ ջուրն՝ ուրիշ ջրէն է,
Ամեն մարդ չի կանա կարդայ իմ գիրն՝ ուրիշ գրէն է.
Բունիաթս աւազ չիմանաս՝ քարափ է քարուկրէն է»...

Առայժմ այսչափ։

Ն. Ցարոյ

Թիֆլիզ, 1 հոկտ.

ԹԻՖԼԻԶԻ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

—

Մեր անուանի գործիչները իրենց թուլացած նեարդերը ամարանոցներում մի լաւ կազդուրելուց յետոյ հէնց որ Թիֆլիզ հասան, բնականաբար նոր թափով երևան եկան ո՛չ թէ գործելու,—այս բանը մեզանում վաղուց է մոռացուած,—այլ մի լաւ իրար եախից բռնելու։

Եւ ահա սկսուեցին բանակռուի անուան տակ անարգելը. հայհոյելը. չէ՞ որ մարդիկ մի քիչ կազդուրուել են, ույժ են հաւաքել. էլ ո՞ր օրուայ և ինչի՞ համար է այդ ամենը, եթէ ոչ միմեանց վարկաբեկելու։

Ոչինչ դէմ չունինք. թող ո՛րքան կուզեն միմեանց վատաբանեն, այդ իրենց ճաշակի ու հասկացողութեան գործն է. բայց երբ իրենց հաշիւները մաքրելու համար էլ հասարակական գործն է մէջտեղը տուժում, այդտեղ արդէն նրանց պէտք է կանգնեցնել և հասկացնել, որ իրաւունք չունին նոյն չափով ու կշռով մօտենալու հասարակական խնդրին։

Ներկայ դէպքում հարցը տառերի գիւտի և տպագրութեան համազգային մեծ յոբելեանին է վերաբերում և առաւել ևս անաչառ մամուլին է մնում կոչ անել հասարակութեան թայֆայականութիւնից հեռու, խոհեմ մասին,—մի կոչ՝ թողնելու խմբական հաշիւները և լուրջ վերաբերմունք ցոյց տալու հարցին։

Թիֆլիզի համար այդ յոբելեանը մի կռուածաղիկ դարձաւ։ Ահա յոբելենական տարին վերջանում է և հայութեան մտաւոր կենդրոն համարուող Կովկասի մայրաքաղաքի ինտելիգենցիան դեռ շարունակում է իր վէճը թէ ո՛վ պիտի տօնէ այդ յոբելեանը՝ Լէօ-Թումանեան, թէ՞ Առաքելեան-Քալանթար խումբը։

Նրանցից ամեն մէկն էլ որոշ խմբերի կողմից է ընտրուած և իրաւապէս և ոչ մէկն էլ թեմական յանձնաժողով չի կարող համարուել, որովհետև նրանց ընտրութեան մէջ թեմը մասնակցութիւն չի ունեցել։ Նրանք երկուսն էլ տեղական բնոյթ ունեն և երբ այդպիսիները կարող են գործել, կարծում ենք ոչ ոք նրանց չի խանգարի։

Միթէ այդ համազգային մեծ տօնը կատարելուն կամ նրան մասնակցելուն որևէ նոյնիսկ մի հայ անհատի կարող է մէկը արգելք հանդիսանալ. տօնը համազգային է և ամեն մի հայ ոչ միայն կարող է, այլև պարտաւոր է մասնակցել, ուրեմն և ինչ իրաւունքի խնդիր բարձրացնել էր։

Միակ բարոյական իրաւատէրը ու հովանաւորողը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է, որ և հրահանգում է այս դէպքում գործի յաջողութեան համար օգնական յանձնաժողովներ ընտրել։ Թիֆլիզը ևս պէտք է ընտրէր. սակայն չնայելով Առաջնորդի ջանքերին, երկու հակառակ խմբերի մէջ ոչ մի հաշտութիւն առաջ չեկաւ դժբաղդաբար, ու կարծես ըստ երևոյթին այդ մեծ տօնը այնպէս անշուք պիտի անցնի կովկասահայերի մտաւոր կենդրոնի համար, ինչպէս անշուք ու աղմկով էլ ըկսուեց։

Միթէ պատիւ է բերում այդ Թիֆլիզի ազգային-հասարակական հաստատութիւններին, մամուլի, գրականութեան ներկայացուցիչներին, Միթէ այդքան մեծ պատգամներ ուղարկող գաւառին մտաւորականների մէջ չկան այնպիսիները, որ համախմբուեն Առաջնորդի շուրջը և վայելուչ կատարեն այդ տօնը։ Ի՞նչ պիտի տեսնի գաւառը, հայութեան մասերը. էլ ինչ վստահութիւն կը մնայ նրանց մէջ, էլ ինչ հաւատ ու յարգանք, երբ չենք կարողանում այսպիսի մեծ, նոյնիսկ չէզոք ազգային-կրթական գործի շուրջն իսկ խմբուել ու գործել։

Ընդամենը մնացել է յոբելենական տարու փակմանը միքանի օր և պէտք է հնարաւորութեան չափ շուտափոյթ մի նոր, բոլորովին անկախ, գործին և ոչ անձ-

նաւորութեանը ծառայող անհատներից մարմին կազմել և տօնը վայելուչ կերպով կատարել։

Կոչ ենք անում բոլոր ուղղամիտ և անշահասէր մտաւորականներին շուտով գործի անցնել և արձագանք տալ Թեմիս Առաջնորդի կոչին ազգային պատիւը արատաւորել չթողնելու։

*
* *

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԿԱՐԳԸ

—

Ուղարկելով Ձեզ առաջիկայ Յօբելենական տօների ծրագիրը, խնդրում եմ տպէք Ձեր լրագրում։

Մեսրոպ եպիսկոպոս

—o—

ԾՐԱԳԻՐ

1. *Հոկտեմբերի* 6-*ին* քաղաքիս բոլոր հայ եկեղեցիներում ս. պատարագից յետոյ կը լինին քարոզներ ազգային մեծ տօնի մասին։

2. *Հոկտեմբերի* 11-*ին* քաղաքիս բոլոր հայ դըպրոցներում դասաւանդութիւնը աւարտւում է 3-րդ դասից յետոյ, ապա ուսուցիչները բացատրում են ամբողջ աշակերտութեան մեծ տօնի նշանակութիւնը.

3. *Հոկտեմբերի* 12-*ին* ս. Թարգմանչաց տօնին Վանաց աւագ եկեղեցում մատուցւում է ս. պատարագ քաղաքիս ամբողջ հոգևոր դասի ներկայութեամբ, պատարագիչն է Աշոտ եպիսկոպոսը։ Պատարագից յետոյ կը կատարուի հոգեհանգիստ Հայ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։ Եկեղեցում ներկայ են լինելու քաղաքիս բոլոր հայ և պետական դպրոցների աշակերտութիւնը և հայ ուսուցչական դասը։ Հրաւիրւում են ներկայ լինել հայ ազգային և կուլտուրական հաստատութիւնները, հայ վաճառականութիւնը, արհեստաւոր դասը իր դրօշակներով և ամբողջ հայ ժողովուրդը։

4. Հայոց Դրամատիքական ընկերութեան նախաձեռնութեամբ Արտիստ. թատրոնում տեղի կունենայ ձրի ներկայացում հայ աշակերտութեան համար։

5. Երեկոյեան 8 ժամին Թիֆլիզի ժողովարանում տեղի կունենան տօնին նուիրուած դասախօսութիւններ։

6. *Հոկտեմբերի* 13-*ին* Վանաց աւագ եկեղեցում մատուցւում է ս. պատարագ ամբողջ հոգևոր դասի և վերոյիշեալ բոլոր հաստատութիւնների և ժողովրդի ներկայութեամբ։ Պատարագիչն է Թեմակալ Առաջնորդը։ Պատարագից յետոյ կը կատարուի Հայրապետական մաղթանք։

Ապա հանդէսը Վանքի աւագ եկեղեցուց եկեղեցական թափորով կուղևորուի դէպի Ներսիսեան դպրոցի նոր շէնքը։

Դպրոցի դահլիճում հանդէսը բաց կանի Թեմի Առաջնորդը մի բանախօսութեամբ։

Հանդէսին հրաւիրուած են լինելու պետական և բարձրաստիճան պաշտօնեաներ և քաղաքիս բոլոր կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչներ։

Հրաւիրուած օտարազգի հիւրերի համար կը լինի բանախօսութիւն ռուսերէն լեզուով։

Հանդիսին կընդունուեն շնորհաւորութիւններ տօնի առիթով։

Դպրոցի հոգաբարձութիւնը ներկաներին կը հիւրասիրի թէյով։

7. Նոյն օրը երեկոյեան Թիֆլիզի ժողովարանի դահլիճում տեղի կունենայ բանկէտ։

8. *Հոկտեմբերի* 14-*ին* Արտիստիք թատրոնում երեկոյեան 8 ժամին լինելու է տօնին նուիրուած ներկայացում կենդանի պատկերներով։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Դասաւանդական ձևեր», Ա. գիրք, Դուրգէն Էդիլեանի։

—

Պ. Էդիլեանը շատ լաւ միտք էր յղացել, երբ որ հայերէն թարգմանեց իր գերմաներէն գիտէրտացիան— «Քննադատութիւն Ցիլլէրի ձևական աստիճանների», որոնք (աստիճանները) մեր մէջ արդէն կոտպաշտութեան չափ անտարակուսելի կերպով մեր կրթական դարձել, մեր կիսակիրթ մանկավարժների ձեռքում։

Իսկ եթէ Ցիլլէրեան ձևական աստիճանները անընդունելի են, տեղն ինչ պէտք է դրուի։ Ահա այս հարցմունքի պատասխանը պիտի լինէին այժմ լոյս ընծայած «Դասաւանդական ձևերը»։ Բայց պէտք է ափսոսալով ասենք, որ որչափ «Քննադատութիւնը» մեր մանկավարժների աչքը բացանող մի ժամանակակից աշխատութիւն էր, այնքան «Դասաւանդական ձևերը» մշուշապատ մի գլուածք է։ Աւելի ևս պէտք է ափսոսալ, որ հեղինակը իր ույժերը լաւ չչափեց և չփորձեց միայն պարզ թարգմանութիւնը տալու։ Օրօրինակ, եթէ ամբողջովին թարգմանէր Սալվիւրկի «Die didaktischen Normalformen», որչափ աւելի օգուտ բերած պիտի լինէր, հարցմունքին պարզ և մէկին պատասխան տալով, քան որ նա դէսից-դէնից (Վունդտից, Մէյմէրից, Դէգէնէրէրից և ուրիշներից) ձիգ-ձիգ, բայց աղճատուած՝ կտորներ քաղելով, մի շատ դժուարատար կառուցում է ձևացրել, կամենալով հիմքի մէջ պճնազարդութեամբ դնել եգիպտական բուրգը, աջ թևին Ստրասբուրգի տաճարի մոտիվները, ձախ թևին Էյֆէլեան աշտարակի ստուերը, իսկ ամբողջութիւնից մի անգլուխ քարակոյտ գոյացնելով։

Ընթերցողը փոքր ինչ շունչ է քաշում, վերջին գլուխը կարդալով. այստեղ Էդիլեանը վերջապէս ձգտում է իր ասելիքները պարզել։ Եւ իրօք, պարզւում է, որ հեղինակը շփոթում է «ձևն» ու «մեթոդը», ուստի և այդպէս անհեթեթ գիրք է շարադրել։